Տ. ՏԻՐԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՅՈՒՐԵՂՅԱՆ

Ծնվել է 1948 թ. Կիպրոսի Նիկոսիա քաղաքում:

Նախնական կրթությունն ստացել է տեղի Մելիքյան-Ուզունյան ազգային վարժարանում:

1962 թ. ընտանիքով ներգաղթել է մայր հայրենիք և բնակություն հաստատել Կիրովական քաղաքում: Ուսումը շարունակել է տեղի միջնակարգ դպրոցում:

1964 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1968 թ., Ս. Ստեփանոսի տոնին, ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Մայր տաճարի փոխլուսարարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի:

1970 թ. ավարտել է հոգևոր ճեմարանը, պաշտպանելով ավարտաճառ՝ «Տարոնի սրբավայրերը» թեմայով:

1971 թ. հոկտեմբերից մինչև 1972 թ. հուլիս ամիսը Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ պաշտոնավարել է Փարիզի Ս. Հովհաննես Մկրտիչ հայոց եկեղեցում:

1972 թ. հոկտեմբերի 15-ին, ձեռամբ Տ. Տիրան արքեպս. Ներսոյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա: